ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳԵՏ-ԳՀԱՊՁԲ-15/4-19/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք. Գյումրի *20 մարտի 2019թ.*

Թամանյան 17ժամը 14:30

<<Գյումրու <<Երեխաների տուն>> ՊՈԱԿ

Գնման առարկա է հանդիսանում 2019թ-ին <<Գյումրու <<Երեխաների տուն>> ՊՈԱԿ կարիքների համար դեղորայքի ձեռքբերումը:

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյան

հանձնաժողովի անդամներ՝ Դ. Հակոբյան, Զ. Գալոյան, Գ. Հարությունյանը

հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Վալեսյան:

1. Հայտեր են ներկայացրել.

ա/ <<Դեզսերվիս>> ՍՊԸ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, հեռ. 011-32-02-01

բ/ <<Հերմո Ֆարմ>> ՍՊԸ, ք. Գյումրի Հաղթանակի 42ա բն.1

Հրավերը (ծանուցումը) 13.03.2019թ-ին հրապարակվել է տեղեկագրում: Հայտեր ներկայացրել են վերոնշյալ 2 մասնակիցները:

2. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

3. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը: Մասնավորապես՝

1. ընթացակարգին մասնակցելու դիմում՝ համաձայն հավելված N 1-ի.

2. հայտարարություն սույն հրավերի 1-ին մասի՝ 2.2 կետով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և 4.3 կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված պահանջների բացակայության մասին՝ համաձայն հավելված N 2-ի, ինչպես նաև նույն կետի 9-րդ ենթակետով նախատեսված անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն հավելված N 2.1-ի.

3. հայտարարություն՝ սույն հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն հավելված N 3-ի), պայմանով, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը.

4. հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 4-ի.

5. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

6. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

7. գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 5-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

4. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների կողմից փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

5. Մասնակիցը առաջարկել է պայմանագրի կատարման հետևյալ գները՝

դրամ

N	Դեղորայքի անվանումը	<< Դեզսերվիս >> ՍՊԸ		<<Հերմո Ֆարմ>> ՍՊԸ	
		Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գինն առանց ԱԱՀ	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	Գինն առանց ԱԱՀ
1	Ֆուրազիդին	-	-	44100	44100
2	դիազեպամ diazepam	-	-	-	-
3	էրգոկալցիֆերոլ /Վիտամին D3/	-	-	7050	7050
4	Պովիդոն յոդ 1000մլ	11000	9166.667	3600	3600
5	Ֆլուկոնազոլ, Ֆլուկոնազոլ-Ինտա	68000	56666,67	9750	9750
6	Վիրակապ ոչ ստերիլ 7*14, հատ +/-26	7050	7050	4500	4500
7	Սպեղանիներ 2.5*5սմ, հատ	13200	13200	9000	9000
8	Դեղերի ներարկման համակարգեր 21G , հատ	8800	8800	7500	7500
9	Ռեհիդրոն	11100	9250	8700	8700
10	գլյուկոզա	30000	25000	27200	27200
11	Կաթետերներ	33000	27500	12000	12000
12	Զինացեֆ	-	-	21600	21600
13	գենտամիցինի քսուկ	-	-	-	-
14	ցիպրինոլ	14840	12366,67	11800	11800
15	ացետիլսալիցիլաթթու	1000	833,3333	160	160
16	Էուտիրոքս	39660	33050	39000	39000

6. **Հայտերի բացման նիստում, գնահատող հանձնաժողովի կողմից կողմ՝ 4, դեմ՝ 0 ձայների հարաբերությամբ՝**

1) թիվ 16 -րդ չափաբաժիններով առաջին տեղ է զբաղեցրել << Դեզսերվիս >> ՍՊԸ –ն

2) թիվ 1,3-9, 11,12,14,15-րդ չափաբաժիններով առաջին տեղ է զբաղեցրել <<Հերմո Ֆարմ>> ՍՊԸ–ն

3) թիվ 10-րդ չափաբաժինի հանձնաժողովի նիստը կասեցվել է, քանի որ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 40-րդ կետի 5)-րդ մասով հրավիրել կազմակերպություններին (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչ) գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը կկայանա 26.03.2019 թվականին, ժամը 12:00-ին, ք. Գյումրի Թամանյան 17 հասցեում:

4) թիվ 2, 13-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները որոշվել են նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով (գները համեմատվել են առանց ԱԱՀ-ի): Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները կճանաչվեն համապատասխան չափաբաժինների հաղթողներ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացվող հարցման դրական պատասխանի դեպքում:

7. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության է սահմանվում 5 օրացուցային օրը, սկսած պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից: Պայմանագրերը պատվիրատուի կողմից հաղթող ճանաչված

մասնակիցների հետ կնքվելու են անգործության ժամկետի ավարտից հետո, հինգ օրացուցային օրվա ընթացքում պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում
Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 26.03.2019 թվականին ժամը 12:00, Թամանյան 17 հասցեում թիվ 10-րդ չափաբաժինի շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար:
Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի
Նախագահ _____ Ա. Գևորգյան

անդամներ՝ _____ Դ. Հակոբյան

_____ Հ. Գալոյան

_____ Գ. Հարությունյան

քարտուղար _____ Պ. Վալեսյան: